963. ԽԱՉՔԱՐ. բեկոր, նույն տեղում, 6 տող.

ԵՍ՝ ԱՂԲԱՐ ԱԲԵՂԱ, ԿԱՆԿՆԵ-
ՑԻ ԽԱՉԱ
ՎԱՆ ... Ա ԵՒ ՀՈՐՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍԻՆ:
[ՈՐՔ ԵՐԿՐՊԱՎԵՔ]
ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՍ:

ՀՊՎԱ

Ծանոթ. Անունը գուցե թե *Աղբարաղեղ:*

ԱԹԱՆ

964. ԽԱՉՔԱՐ. գյուղի հանգստարան տանող ճանապարհի եզրին, ժայռի վրա, քիվին և խաչահանգույցում, 3 տող.

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ:
ՔՍ ԱՃ
ՏՐ ՅՍ

ՀՊՎԱ

965. ԽԱՉՔԱՐ. գյուղից 3 կմ հյուսիս, մատուռի մեջ, 7 տող.

Ի ԹՎԱ[ԿԱՆԻՍ] ՀԱՅՈՑ
:ՈՃԹ: (1210), ԵՍ՝ ՎԱՐԴԱՆ
ՓԱՇԱՆ, ԿԱՆԳՆԵՑԻ
ԳՆՂԱՆ ՍՈՒՐԲ
ԽԱՉՍ Ի ՎԵՐԱՅ Հ
ԱՆԳՍՏԱՐ-
ԱՆԻ ՏՂԱՅՈՑ ԻՄՈՑ:

ՀՊՎԱ

Ծանոթ. Անհասկանալի է ԳՆՂԱՆ բառը: Հնարավոր է, դա խաչքարի որպիսությունը վկայող արտահայտություն է՝ «գեղեցիկ», «գեղանի» և այլն (խմբ.):

ՍՊԻՏԱԿԻ ԵՆԹԱՇՐՋԱՆ

Շրջանի հնագիտական հուշարձանների պեղումների և շինաշխատանքների ընթացքում գտածոները վերաբերում են բրոնզե դարաշրջանին: Դամբարանները հարուստ են նաև հելլենիստական ժամանակների նյութերով (կավամաններ, մետաղական իրեր, քարակերտ արձաններ): Վաղ միջնադարյան եկեղեցիներ կան Գոգարանում (IV դ.), Արջուտում, Շիրակամուտում (Չիչխանավանք) և այլուր, որոնք, սակայն, զուրկ են գրավոր հիշատակագրություններից: Շինարարական արձանագրություններ ունեն ԺԹ դարում կառուցված փայտածածկ բազիլիկ եկեղեցիները:

Փոքրիկ շրջանը տեղավորված է Փամբակի հովտում, որով անցած առևտրական ճանապարհի հանգույցներից մեկում բացվել է ժայռափոր համալիր (կացարաններ, իջևանատուն, եկեղեցի), որը մեծապես վնասվել է 1988 թ. երկրաշարժից:

Սպիտակի, Շիրակի, Գուգարքի գերեզմանոցներում անհամար են 1988.7.XII նշահամարով ողբերգական տապանագրերը:

966. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Սպիտակ քաղաքի գերեզմանոցում. Գարիկ և Գոհարիկ Հայրապետյան նահատակների տապանագիրը, որը կրկնում է թումանյանական մրմունջը.

Քույր և եղբայր իրար կից.
Հավերժական լուռ դրկից.
Խորհում էին իրար հետ՝
Թե ինչ տարան աշխարհից:

967. ՏԱՊԱՆԱՔԱՐ. նույն գերեզմանոցում, 13-ամյա Գնելի ծնողների հոգեթով խռովքը.

Ո՞վ կդիմանար այսքան ցավերի,
Քեզ ի՞նչ ենք արել, Ամենավերին,
Որ սև սարի պես ընկար մեր գլխին...

968. ՏԱՊԱՆԱՔԱՐ. նույն գերեզմանոցում, 14-ամյա Աշոտ Սարգսյանի մոր կարոտագին հեծեծանքը.

Ինչքան էլ քեզ ծաղիկներ բերեմ՝
Ոչ մեկի բույրը քեզ չի հասնելու,
Հովերի չափ էլ հողդ համբուրեմ՝
Սրտիս մրմուռը քեզ չի հասնելու:

Ծանոթ. Երկրաշարժի նահատակների տապանագիր բանաստեղծություններն ու պատկերագրական մանրամասները մի ամբողջ հատոր կարող է կազմել, որում խտացած է ժողովրդի պոռթկումն ու բողոքը բնության, մահվան սև ուրվականի հանդեպ: Նրա խոհափիլիսոփայական մտորումները, պատասխան չտրվող մահվան առեղծվածը:

ԱՐՋՈՒՏ

969. ՔԱՌԱԿՈՂ ԿՈԹՈՂ. նիստին, 3 տող.



ՍԱՅ է
ԽԱՉՍ
ԱՋԵՄԱ:

Ծանոթ. Կոթողի բեկորը և այն պսակող քանդակազարդ թևավոր խաչի կտորները հայտնաբերվել են գյուղամիջյան Ս. Գևորգ խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցու փլատակներից: Շրջանակի հավասարաթև խաչը, տառերի հնագրական ձևերը բնորոշ են VI-VII դարերին և եկեղեցու ժամանակակիցն են կամ թե՝ նախորդել են նրան: